



**ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ
 ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ¹**

No.	Պայման	Բնակարանային միկրովարկեր	Էներգաարդյունավետ վերանորոգում
1.	Վարկի տրամադրման պայմանները		
1.1	Արժույթ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1.2	Վարկի նպատակը	Բնակարանային պայմանների բարելավում/բնակելի անշարժ գույքի վերանորոգում	Բնակելի անշարժ գույքի վերանորոգում՝ ուղղված էներգաարդյունավետության բարձրացմանը
1.3	Վարկի գումար	500-4,000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ/ դիմումի մուտքագրման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքին համաձայն/	4,001-10,000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ/ դիմումի մուտքագրման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքին համաձայն/
1.4	Վարկի ժամկետ (ամիս)՝	60-120 ամիս	60-120 ամիս
1.5	Արտոնյալ ժամանակահատված	6-12 ամիս	6-24 ամիս
1.6	Տարեկան անվանական տոկոսադրույք	11,5%	9,5%
1.7	Տարեկան փաստացի ² տոկոսադրույք	Սկսած 11.57%	Սկսած 9.92%
1.8	Դրամաշնորհ	Վարկառուն ստանում է վարկի պայմանագրային գումարի 10%-ի չափով դրամաշնորհ, որն ուղղվում է մայր գումարի մարմանը, եթե վարկի գումարի 50%-ից ավելին օգտագործվում է էներգաարդյունավետության	Վարկառուն ստանում է վարկի պայմանագրային գումարի 5%-ի չափով դրամաշնորհ, որն ուղղվում է մայր գումարի մարմանը, եթե վերանորոգման արդյունքում էներգախնայողության ցուցանիշը կազմում է նվազագույնը 35%:

		բարձրացման համար նախատեսված նյութերի/պարագաների ձեռքբերման նպատակով:	
1.9	Տոկոսների հաշվարկման կարգ	Հաշվարկվում են վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին 365 օր	
1.10	Վարկ/գրավ հարաբերակցություն		Առավելագույնը 50%,
1.11	Տրամադրման եղանակ	անկանխիկ, կանխիկ	
1.12	Տրամադրման որոշման կայացման ժամկետ	3 աշխատանքային օրվա ընթացքում	
1.13	Տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	1 աշխատանքային օրվա ընթացքում	
1.14	Գումարի փաստացի տրամադրման ժամկետ	Հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում	
1.15	Հաստատված/ դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	10,000 ՀՀ դրամ	
2.	<i>Բանկի և երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարներ</i>		
2.1	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	30,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ
2.2	Ապահովագրության մոտավոր տարեկան ծախսը		0.15% վարկի մնացորդային գումարից 0.15% գրավի գնահատված արժեքից
2.3	Գրավի գնահատման մոտավոր ծախս		15,000 ՀՀ դրամ
2.4	Մոտավոր այլ անհրաժեշտ ծախսեր՝ կապված գրավի ձևակերպման և պետական գրանցման հետ		50,000 ՀՀ դրամ
2.5	Կանխիկացում	0%	
3.	<i>Վարկի մարման պայմանները</i>		
3.1	Մարման եղանակ	Ամսական անուիտետային ³ կամ մայր գումարի հավասարաչափ վճարներ՝ ըստ հաճախորդի ցանկության	
3.2	Վաղաժամկետ մարում	համաձայն 22.05.2018թ.-ին ուժի մեջ մտած Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին ՀՀ օրենքի	

3.3	Վարկի գումարի մարման կետանցի դեպքում՝ տոկոս մարման ենթակա գումարից	0.1%
3.4	Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում՝ տոկոս մարման ենթակա գումարից	0.1%
3.5	Ժամկետանց գումարի (վարկ, տոկոսագումար) նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	Նախատեսված է ՀՀ Քաղ. Օրենսգրքի 372 հոդվածի պահանջներով
3.6	Մոնիթորինգի գործողություններին խոչընդոտելու դեպքում՝ տուգանք	50,000 ՀՀ դրամ
3.7	Վարկի գումարը կամ դրա մի մասը ոչ նպատակային օգտագործելու դեպքում՝ տույժ	Ոչ նպատակային օգտագործված գումարի 10%-ի չափով
3.8	Գործող պայմանագրի (վարկային, գրավի, այլ) պայմանների, մարման գրաֆիկի փոփոխություն/ վերանայում ⁴	50,000 դրամ
4.	<i>Գրավի գնահատում և ապահովագրություն</i>	
4.1	Գրավի շուկայական արժեքի գնահատման պահանջ	Պարտադիր: Գնահատումը պետք է իրականացվի Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից
4.2	Գրավի ապահովագրության պահանջ վարկի ողջ ժամկետի համար	Ապահովագրումը իրականացվում է մեկ տարի ժամկետով: Ամեն հաջորդող տարում վերաապահովագրվում է ևս մեկ տարով: Վերջին տարվա համար ապահովագրությունը կատարվում է վարկի մնացած ժամկետի համար: Գույքը ապահովագրվում է գնահատված շուկայական արժեքի չափով:
4.3	Դժբախտ պատահարի արդյունքում աշխատունակության կորստի ապահովագրության պահանջ վարկի ողջ ժամկետի համար	Ապահովագրվում է դժբախտ պատահարի արդյունքում աշխատունակության կորուստը: Ապահովագրվում են Հաճախորդը, համավարկառուն և այն անձինք, որոնք կրում են համապարտ պատասխանատվություն Բանկի առջև վարկի մարման համար (եկամուտներին համապատասխան) վարկի մնացորդի չափով:

5. Ապահովություն			
5.1	Վարկի ապահովությունը	Նվազագույնը մեկ անձի երաշխավորություն, կամ այլ գրավ՝ բացառությամբ անշարժ գույքի	Վերանորոգվող անշարժ գույք, գույքի համասեփականատերերի երաշխավորություն
5.2	Գրավի գտնվելու վայրը	Հայաստանի Հանրապետություն (բացառությամբ Երևան քաղաքի Կենտրոն համայնքը)	
6. Այլ պահանջներ			
6.1	Վարկային պատմություն	Վարկառուն չպետք է ունենա ժամկետանց պարտավորություններ վարկի տրամադրման պահին Ժակետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը	
6.3	Այլ Պայմաններ	<ul style="list-style-type: none"> • Երաշխավորը չի կարող միաժամանակ հանդես գալ որպես համավարկառու • Երաշխավորը չպետք է ունենա խնդրահարույց պարտավորություններ վարկը տրամադրելու պահին • Երաշխավորը վարկի տրամադրման պահին կարող է ունենալ առավելագույնը 2 գործող երաշխավորություն՝ տրամադրված այլ անձանց պարտավորությունների դիմաց • Էներգաարդյունավետ վերանորոգման վարկի գումարի նվազագույնը 50%-ը պետք է ուղղված լինի բնակելի անշարժ գույքի էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված նյութերի/պարագաների ձեռքբերմանը • Մեկ վարկառուն Ծրագրի շրջանակներում կարող է վարկավորվել միայն մեկ անգամ • Վարկառուն/համավարկառուն պետք է լինի վերանորոգվող բնակելի անշարժ գույքի առնվազն համասեփականատեր 	

¹ Նշված պայմաններից շեղումներով վարկային հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

² Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Հաճախորդի համար՝ տոկոսագումարները և այլ անհրաժեշտ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում

³ Անուիտետը ենթադրում է վարկի և տոկոսագումարների ամենամսյա հավասարաչափ մարումներ:

⁴ Գործող պայմանագրի փոփոխություն են համարվում առնվազն հետևյալ դեպքերը, եթե այլ դեպքերի համար առանձին որոշում չկայացվի Բանկի Վարկային Կոմիտեի կողմից՝

- վարկային պայմանագրով սահմանված մարումների ժամանակացույցի վերանայումը, եթե նշվածի համար նախատեսված չէ վաղաժամկետ մարման համար սահմանված տույժի վճարում,
- հաճախորդի դիմումի համաձայն վարկային պայմանագրի այլ պայմանների (տոկոսադրույք, վարկի նպատակ, տարամադրման եղանակ և այլն) փոփոխությունը,
- հաճախորդի դիմումի համաձայն ապահովության, այդ թվում՝ գրավի կամ երաշխավորության պայմանագրի հիմնական պայմանների փոփոխությունը, գրավի կամ երաշխավորության վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի ազատումը և այլն
- սակագինը չի տարածվում այն պայմանագրերի փոփոխության վրա, որոնց փոփոխությունը մեկ այլ պայմանագրի փոփոխության հետևանք է:

⁵ Սակագնի առկայությունը չի նշանակում Բանկի կողմից պահանջվող թույլտվությունը տրամադրելու պարտականություն, և ելնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից Բանկը կարող է մերժել հաճախորդի դիմումը, առանց պատճառաբանություններ և հիմնավորումներ ներկայացնելու: